ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

22.05.2024թ. N 02/16.4/7467-2024

«Շինսերտիֆիկատ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Ալեքսանդր ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
էլ. փոստի հասցե՝ info@shincertificate.net

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Վարդանյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2020 թվականի հոկտեմբերի 28-ին կնքվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վ. Բարեղամյանի անվան հիմնական, գ. Ջիլի և գ. Աղբերքի Շատջրեքի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/26-2 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից 2024 թվականի մայիսի 21-ի N Ն/27.1/4080-2024 զեկուցագիրը և պայմանագրի 2.1.3 կետի ա) պարբերությունը՝ Պատվիրատուն 2024 թվականի մայիսի 22-ից Պայմանագիրը ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղ Աղբերքի Շատջրեքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության մատուցման մասով մասնակի միակողմանի լուծում է:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2024 թվականի մայիսի 22-ին կտեղադրվի տեղեկագրում, որին հաջորդող տասներորդ օրացուցային օրը կկայացվի Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշումն Ընկերությանը գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

(այսուհետ՝ Ցուցակ) ներառելու մասին: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր կտրամադրվի լիազորված մարմնին և Ընկերությանը:

Եթե մինչև Պատվիրատուի ղեկավարի որոշման կայացման վերջնաժամկետը լրանալու օրը ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900008000664 հաշվեհամարին Ընկերության կողմից վճարվեն պայմանագրի ապահովման 2 828 821 (երկու միլիոն ութ հարյուր քսանութ հազար ութ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ և որակավորման ապահովման 8 486 462 (ութ միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ գումարները, ապա Պատվիրատուն Ընկերությանը Ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հարգանքով՝

Պարտականությունները կատարող

Ստորագրող
ԿԱՐԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ
1810760100

2024-05-22 17:31:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան; հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան; հեռ: 011621722